ՀԱՆՐԱՄԱՏՉԵԼԻ

Հավելված № 1
Հաստատված է
«ԱյԴի Բանկ» ՓԲԸ Վարչության նախագահի
2025 թվականի ապրիլի 9-ի N 37-Լ կարգադրությամբ

«ԱՅԴԻ ԲԱՆԿ» ՓԲԸ-Ի ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԵՎ ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐԵՐԻ ՎԱՐԿԱՎՈՐՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

Պատասխանատու ստորաբաժանում	Իրավաբանական վարչություն
Ուժի մեջ մտնելու ամսաթիվը	14/04/2025
Տարածումը	Բանկի բոլոր ստորաբաժանումներ
Այլ դրույթներ	
Առնչվող փաստաթղթեր	

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ 3
2. ՎԱՐԿԱՎՈՐՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՅՄԱՆՆԵՐ 4
3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ և ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 7
4. ԵՐԱՇԽԻՔՆԵՐ ԵՎ ՀԱՎԱՍՏԻԱՑՈՒՄՆԵՐ 16
5. ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ ԵՐԱՇԽԱՎՈՐՈՒԹՅԱՄԲ 19
6. ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ 20
7. ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒՄ 21
8. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՈՒՄԸ 21
9. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ 22

1. ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ

1.1. **«Բանկ կամ Վարկատու»**՝ «ԱյԴի Բանկ» ՓԲԸ (սույն կանոններում և Պայմանագրում կարող է կիրառվել նաև «Վարկատու» տերմինը),

1.2. **«Վարկառու»՝** Բանկի հետ Պայմանագիր կնքած կամ այն կնքելու մտադրություն հայտնած անհատ ձեռնարկատեր (այսուհետ նաև՝ ԱՁ) կամ իրավաբանական անձ, որին տրամադրվելու է կամ տրամադրվել է Վարկը, ինչպես նաև Վարկառուի հետ Պայմանագրից ծագող միևնույն իրավունքներից օգտվող կամ օգտվելու մտադրություն հայտնած և պարտավորություններ կրող համավարկառու,

1.3. **«Երաշխավոր»՝** Բանկի հետ Վարկառուի պարտավորությունների ապահովման համար Երաշխավորության պայմանագիր կնքած կամ այն կնքելու մտադրություն հայտնած ֆիզիկական կամ իրավաբանական անձ,

1.4. **«Վարկ»՝** սույն կանոնների իմաստով Բանկի կողմից հրապարակված տեղեկատվական ամփոփագրի պայմաններով սահմանված վարկ և/կամ վարկային գիծ և/կամ օվերդրաֆտ,

1.5. **«Օֆերտա»՝** Պայմանագիր կնքելու համար Վարկառուի կողմից ներկայացված Վարկ ստանալու վերաբերյալ դիմում, որը Բանկի կողմից ակցեպտավորվելով՝ Բանկի և Օֆերտա ներկայացրած անձի միջև ծագում են պայմանագրային իրավահարաբերություններ, իսկ Երաշխավորի առկայության դեպքում նաև Երաշխավորի կողմից երաշխավորություն տրամադրելու դիմում, որը Բանկի կողմից ակցեպտավորվելով ծագում են երաշխավորության իրավահարաբերություններ:

1.6. **«Ակցեպտ»՝** Պայմանագիր կնքելու նպատակով Վարկառուի և/կամ Երաշխավորի կողմից ներկայացված Օֆերտան ակցեպտավորելու (ընդունելու) վերաբերյալ Բանկի կողմից տրամադրված հավաստում,

1.7. **«Պայմանագիր»՝**

ա) Բանկի և Վարկառուի միջև սույն կանոնների պահպանմամբ կնքված վարկային պայմանագիր, որը կնքվում է Կողմերի կողմից մեկ փաստաթուղթ կազմելու միջոցով կամ Օֆերտան և Ակցեպտը միասին,

բ) Բանկի, Վարկառուի և Երաշխավորի միջև կնքված վարկային և երաշխավորության խառը պայմանագիր՝ Վարկառուի և Երաշխավորի Օֆերտան և Բանկի Ակցեպտը միասին:

1.8. **«Երաշխավորության պայմանագիր»՝** մեկ փաստաթուղթ կազմելու միջոցով Երաշխավորի և Բանկի միջև կնքվող պայմանագիր,

1.9. **«Կողմեր»՝** Պայմանագրի կողմերը՝ Բանկը և Վարկառուն միասին, իսկ Երաշխավորի առկայության դեպքում՝ նաև Երաշխավորը,

1.10. **«Բանկային հաշիվ»՝** Բանկի կողմից Վարկառուի անունով բացվող կամ արդեն բացված հաշիվ,

1.11. **«Տեղեկատվական ամփոփագիր»՝** Բանկի կողմից հաստատված և հրապարակված Վարկի տրամադրման և սպասարկման պայմաններ, այդ թվում՝ դրանց փոփոխությունները: Համապատասխան վարկատեսակի Տեղեկատվական ամփոփագիրը հանդիսանում է դրա շրջանակներում տրված Վարկի Պայմանագրի անբաժանելի մաս,

1.12. **«Կանոններ»՝** «ԱյԴի Բանկ» ՓԲԸ-ի իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի վարկավորման սույն կանոնները:

2. ՎԱՐԿԱՎՈՐՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1. Պայմանագրի կնքման կարգը՝ Օֆերտայի ներկայացման և Բանկի ակցեպտավորմամբ կնքելու դեպքում՝

2.1.1. Վարկառուն Բանկին ներկայացնում է Օֆերտա՝ Վարկ ստանալու նպատակով: Բանկի կողմից Ակցեպտը /այդ թվում՝ դրան կից և անբաժանելի հավելվածները/ ուղարկվում է Վարկառուի կողմից տրամադրված էլեկտրոնային փոստի հասցեին, ընդ որում՝ Ակցեպտը ստանալու պահից Օֆերտան համարվում է պատշաճ ակցեպտավորված, և Պայմանագիրը՝ կնքված:

2.1.2. Եթե Բանկի կողմից տրամադրված Ակցեպտի պայմանները տարբերվում են Օֆերտայով ներկայացված Վարկի պայմաններից, ապա այն հանդիսանում է նոր օֆերտա (որը ներառում է Վարկառուի կողմից ներկայացված Օֆերտան՝ Ակցեպտին չհակասող մասով), որը համարվում է Վարկառուի կողմից ակցեպտավորված, և նոր պայմաններով Պայմանագիրը՝ կնքված, Վարկառուի կողմից Ակցեպտը ստանալու Բանկային օրվա ընթացքում իր հաշվին փոխանցված Վարկի գումարը կամ դրա մի մասը օգտագործելու կամ մինչև Ակցեպտը ստանալու Բանկային օրվա ավարտը Ակցեպտում նշված Բանկի էլեկտրոնային փոստի հասցեին Ակցեպտից հրաժարվելու վերաբերյալ նամակով չտեղեկացնելու դեպքում: Ընդ որում, Վարկառուն վերոնշյալ եղանակով արտահայտում է իր կամքը՝ ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 294-րդ հոդվածի 3-րդ մասով: Հակառակ դեպքում՝ Պայմանագիրը համարվում է չկնքված: Սույն կետով սահմանված կարգով կնքված Պայմանագիրը ներառում է Վարկառուի ներկայացրած Օֆերտան, Ակցեպտը, Կանոնները և համապատասխան վարկատեսակի Տեղեկատվական ամփոփագիրը, իսկ Տեղեկատվական ամփոփագրով կամ Կանոններով նախատեսված լինելու դեպքում նաև այլ փաստաթղթեր: Սույն կետով սահմանված ձևով ակցեպտավորումը կիրառվում է, եթե այլ բան սահմանված չէ Վարկի Օֆերտայով, որի դեպքում կիրառվում է Օֆերտայով սահմանված կարգը:

2.2. Վարկը տրամադրված է համարվում Վարկառուի Բանկային հաշվին փոխանցելու պահից, իսկ վարկային գիծը և օվերդրաֆտը վճարային քարտի միջոցով տրամադրվելու դեպքում՝ վճարային քարտը ակտիվացնելու պահից:

2.3. Պայմանագրով Բանկը Վարկառուին տրամադրում է Վարկ, իսկ Վարկառուն պարտավորվում է Պայմանագրով սահմանված պայմաններով վերադարձնել Վարկը և տոկոսներ վճարել դրա դիմաց, վճարել Տեղեկատվական ամփոփագրով սահմանված այլ վճարումները և կատարել կնքվող Պայմանագրից բխող այլ պարտավորություններ:

2.4. Վարկի օգտագործման համար տոկոսների հաշվարկումը (կուտակումը) իրականացվում է յուրաքանչյուր օր՝ սկսած Վարկի տրամադրման օրվանից, Վարկի տոկոսագումարը հաշվարկվում է Վարկի փաստացի մնացորդի նկատմամբ, իսկ սահմանված տոկոսադրույքը կարող է փոփոխվել Կանոններով կամ Պայմանագրով սահմանված կարգով: Ընդ որում՝ ժամկետանց պարտքի առկայության դեպքում տոկոսագումարների հաշվարկը շարունակվում է մինչև Վարկի մարման վերջնաժամկետը, իսկ Վարկի մարման վերջնաժամկետից հետո Վարկի փաստացի մնացորդի նկատմամբ հաշվարկվում են տոկոսներ՝ համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով սահմանված տոկոսադրույքի:

2.5. Վարկի օգտագործման համար սահմանված փաստացի տոկոսադրույքի հաշվարկի մեջ ներառվում են՝ վարկավորման նպատակով Վարկառուի կողմից կատարված ծախսերը: Նշված հաշվարկի օրինակը հրապարակված է Բանկի www.idbank.am ինտերնետային կայքում: Վարկառուն, Կանոններին համաձայնություն տալով, հավաստում է, որ ծանոթացել է դրան և

այն իր համար ամբողջությամբ ընդունելի է (սույն կետը կիրառելի է «Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մասին» օրենքով սահմանված՝ գերփոքր առևտրային կազմակերպություններին և անհատ ձեռնարկատերերին մինչև 5.000.000 դրամի չափով կամ դրան համարժեք արտարժույթով տրամադրված Վարկի դեպքում):

2.6. Վարկի մայր գումարի և տոկոսագումարների մարումն իրականացվում է՝ համաձայն Տեղեկատվական ամփոփագրով սահմանված կարգի, եթե այլ բան նախատեսված չէ Պայմանագրով:

2.7. Եթե Պայմանագրի անբաժանելի մասը հանդիսացող Վարկի մարման ժամանակացույցով նախատեսված Վարկի մարման օրը շաբաթ կամ կիրակի է, ապա մարումը համապատասխանաբար կատարվում է այդ օրերին հաջորդող շաբաթվա առաջին աշխատանքային օրը, իսկ եթե մարման օրը ՀՀ օրենսդրությամբ նախատեսված ոչ աշխատանքային օր է, բացառությամբ սույն կետով նշված օրերի, ապա մարումը կատարվում է հաջորդող աշխատանքային օրը:

2.8. Պայմանագրից բխող վճարների (դրանց մի մասի), այդ թվում, բայց չսահմանափակվելով՝ Վարկի գումարի, տոկոսագումարի, այլ վճարների, վճարման կարգը մարման ժամանակացույցով սահմանված լինելու դեպքում, այն հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մաս, որը ուղարկվում է Վարկառուի էլեկտրոնային փոստի հասցեին:

2.9. Վարկառուին տրամադրված Վարկի ժամկետայնության և տոկոսների հաշվարկման համար հիմք է ընդունվում տարին 365 օրացուցային օր սկզբունքը:

2.10. Վարկատուի նկատմամբ ունեցած պարտավորությունները կատարելիս մարումներն ընդունվում են հետևյալ հերթականությամբ. ա) գումարի հետ վերադարձման համար Բանկի կողմից կատարված ծախսեր, բռնագանձմանն ուղղված ծախսեր,[1] բ) տոկոսների տուժանք, գ) վարկի մայր գումարի տուժանք, դ) տոկոսներ, ե) սպասարկման վճար և միջնորդավճարներ (առկայության դեպքում) և զ) վարկի գումար: Վարկատուն իրավունք ունի ցանկացած ժամանակ միակողմանիորեն փոփոխելու սույն կետում նշված մարումների հերթականությունը: Ընդ որում, պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման արդյունքում ժամկետանց պարտավորությունների առկայության դեպքում առաջնահերթ մարումներն ընդունվում են ի կատարումն ժամկետանց պարտավորությունների, այնուհետ՝ սույն կետով նախատեսված կարգով՝ ժամանակացույցով նախատեսված պարտավորությունների մասով:

2.11. Վարկատուի պահանջը փաստացի բավարարման պահին ներառում է տուժանքն ու վնասները, Բանկի կողմից կատարված ծախսերը, բռնագանձմանն ուղղված ծախսերը, սպասարկման վճարները և միջնորդավճարները, տոկոսագումարը, Վարկի մայր գումարը:

2.12. Վարկառուի մոտ դրամական միջոցների անբավարարության յուրաքանչյուր դեպքում պահանջների բավարարման հերթականությունը սահմանում է Բանկը, ընդ որում՝ յուրաքանչյուր դեպքում այդ հերթականությունը կարող է տարբեր լինել և չհամապատասխանել նաև ՀՀ օրենսդրությամբ սահմանված հերթականությանը:

2.13. Կողմերը սույնով գիտակցում և ընդունում են, որ Վարկի տոկոսադրույքը սահմանվում է հաշվի առնելով Վարկառուի վարկունակությունը, պարտավորությունների պատշաճ կատարման նկատմամբ պատասխանատվությունը, և սույնով գալիս են համաձայնության առ այն, որ 1-ին, 2-րդ և 3-րդ անգամ Վարկի մարման ժամանակացույցով սահմանված օրվանից հետո Վարկառուի կողմից 10 (տասը) օր և ավելի անընդմեջ Պայմանագրով սահմանված ժամկետում

1 Ընդ որում՝ նշված ծախսերը Բանկի կողմից ենթակա են բռնագանձման անկախ ծախսի կատարումից հետո Վարկառուի կամ որևէ երրորդ անձի կողմից կամավոր կերպով հիմնական պարտավորության կատարման հանգամանքից:

վարկի մարումներ չկատարելու դեպքում Բանկն իրավունք ունի Վարկի տարեկան տոկոսադրույքը յուրաքանչյուր անգամ բարձրացնել 1 (մեկ) տոկոսային կետով, եթե ժամկետանց պարտավորությունը (չվճարված վարկի գումարը և/կամ տոկոսագումարը կամ դրանց հանրագումարը) գերազանցում է 10.000 (տասը հազար) ՀՀ դրամը:

Վարկառուի կողմից Բանկում և/կամ այլ բանկերում և/կամ վարկային կազմակերպություններում սուբյեկտիվ դասակարգմամբ վարկային պարտավորություններ ունենալու դեպքում Բանկն իրավունք ունի Վարկի տարեկան տոկոսադրույքը միակողմանիորեն բարձրացնել և սահմանել մինչև Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի սահմանած բանկային տոկոսի հաշվարկային դրույքի կրկնապատիկը: Բանկը ծանուցում է սույն կետում կատարված փոփոխության մասին Վարկառուին՝ փոփոխությունից հետո 7-օրյա ժամկետում:

Սույն կետով սահմանված կարգով տոկոսադրույքը բարձրացնելուց հետո Բանկն իրավունք ունի Վարկառուի դիմումի հիման վրա միակողմանիորեն իջեցնել տոկոսադրույքը, եթե տոկոսադրույքի բարձրացումից հետո 6 (վեց) ամիս անընդմեջ Վարկը մարվել է առանց ժամկետանցումների:

2.14. Վարկի տոկոսադրույքը, միջնորդավճարները, սպասարկման վճարների չափերը և Կանոններով նախատեսված պայմանները Վարկատուն կարող է միակողմանիորեն փոփոխել, այդ մասին Վարկառուին և Երաշխավորին 7 (յոթ) աշխատանքային օր առաջ Պայմանագրով ընտրված եղանակով ծանուցելու միջոցով: Ընդ որում՝ ԱԲՀՏ բաղադրիչով հաշվարկվող տոկոսադրույքի փոփոխության դեպքում համապատասխանաբար փոփոխվում են տոկոսադրույքի հաշվարկում տեղ գտած հաստատուն տոկոսադրույքի չափերը, օրինակ՝ եթե Պայմանագրում սահմանված է Վարկի տոկոսադրույքը ԱԲՀՏ գումարած 3 տոկոս, ապա տոկոսադրույքը 2 տոկոսային կետով բարձրանալու դեպքում, այն կփոփոխվի և կսահմանվի ԱԲՀՏ գումարած 5 (3%+2%): Սույն կետը չի կարգավորում ԱԲՀՏ- փոփոխման կարգը:

2.15. ԱԲՀՏ տոկոսադրույքը փոփոխական մեծություն է, «ԱյԴի Բանկ» ՓԲԸ հաշվարկային տոկոսադրույքը (ԱԲՀՏ), հաշվարկման մեթոդաբանությունը, ինչպես նաև փոփոխման հաճախականությունը հրապարակված են Վարկատուի պաշտոնական ինտերնետային կայքէջում՝ (http://www.idbank.am/retail/IDBank-reference-rate-ibrr//):

2.16. Վարկի և տոկոսագումարների մարման ժամանակացույցով սահմանված վճարները (դրանց մի մասը), Բանկի կողմից միակողմանի փոփոխվելու պարագայում Բանկը գրավոր (Պայմանագրով նախատեսված լինելու դեպքում էլեկտրոնային փոստին ուղարկելու միջոցով) ծանուցում է Վարկառուին՝ կցելով Վարկի՝ փոփոխված մարման ժամանակացույցը և Վարկառուն անվերապահորեն պարտավորվում է համապատասխան վճարները կատարել համաձայն փոփոխված մարման ժամանակացույցի: Փոփոխված մարման ժամանակացույցը Վարկառուին ուղարկման պահից հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.17. Պայմանագիրը կնքելով՝ Վարկառուն տալիս է իր անվերապահ համաձայնությունն առ այն, որ Վարկատուն իրավունք ունի Կանոններով և Պայմանագրով սահմանված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում առանց լրացուցիչ ծանուցման Վարկառուի հաշիվներից անակցեպտ գանձել պարտքի չափին համապատասխան գումար: Տվյալ պարագայում, Բանկը անակցեպտ գանձումները կատարում է Պայմանագրով նախատեսված Վարկի մարման ժամանակացույցով նախատեսված վճարումները կատարելու բանկային օրվա ավարտին: Ընդ որում, պարտավորությունների չափին համապատասխան գումարը անակցեպտ գանձվում է Վարկառուի այն արժույթով հաշվից, որով տրամադրվել է Վարկը, իսկ դրանում միջոցների բացակայության կամ անբավարարության դեպքում՝ այլ արժութային հաշիվներից՝ Բանկի ընտրությամբ, որի դեպքում

արժույթների փոխարկումն իրականացվում է այդ պահին Բանկում գործող համապատասխան փոխարժեքով:

2.18. Տարեկան փաստացի տոկոսադրույքը և ընդհանուր ծախսը հաշվարկված են Պայմանագրի կնքման օրվա դրությամբ, կրում են կողմնորոշող բնույթ և կարող են Պայմանագրի գործողության ընթացքում փոփոխվել՝ կապված օգտագործված գումարները և տոկոսները Վարկառուի կողմից վճարման արտոնյալ ժամանակահատվածում մարելու, ինչպես նաև դրա հաշվարկում ներառված տարրերի փոփոխությունից:

2.19. Բանկի կողմից պարտավորությունների վաղաժամկետ կատարման պահանջի ներկայացումը կամ տոկոսադրույքի փոփոխությունը Բանկին չի զրկում համապատասխան խախտման համար Վարկառուի նկատմամբ Պայմանագրով և/կամ Կանոններով նախատեսված պատասխանատվության որևէ միջոց կիրառելու իրավունքից:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ և ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Վարկառուն իրավունք ունի՝

3.1.1. վաղաժամկետ հետ վերադարձնել Վարկը՝ կատարելով դրանց գործողության ընթացքում Բանկի հանդեպ Պայմանագրով սահմանված բոլոր դրամական պարտավորությունները, ընդ որում՝ Բանկն իրավունք ունի Վարկառուից պահանջել վճարել միանվագ տուգանք Պայմանագրով կամ Տեղեկատվական ամփոփագրով սահմանված չափով (չի գործում անհատ ձեռնարկատերերին մինչև 5.000.000 դրամի չափով կամ դրան համարժեք արտարժույթով տրամադրված գյուղատնտեսական նշանակության տրամադրված Վարկի և «Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մասին» օրենքով սահմանված գերփոքր առևտրային կազմակերպություններին և անհատ ձեռնարկատերերին մինչև 5.000.000 դրամի չափով կամ դրան համարժեք արտարժույթով տրամադրված Վարկի դեպքում):

3.1.2. Վարկատուից ստանալ տեղեկանք Վարկի շարժի մասին,

3.1.3. առանց որևէ պատճառաբանության միակողմանիորեն լուծելու Պայմանագիրը՝ դրա կնքմանը հաջորդող 7 (յոթ) աշխատանքային օրվա ընթացքում (մտածելու ժամանակ)՝ հետ վերադարձնելով իր ստացած Վարկի գումարն ամբողջությամբ և վճարելով տոկոսներ, որոնք հաշվարկվում են Պայմանագրով նախատեսված տարեկան փաստացի տոկոսադրույքին համապատասխան (գործում է անհատ ձեռնարկատերերին մինչև 5.000.000 դրամի չափով կամ դրան համարժեք արտարժույթով տրամադրված գյուղատնտեսական նշանակության տրամադրված Վարկի և «Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մասին» օրենքով սահմանված գերփոքր առևտրային կազմակերպություններին և անհատ ձեռնարկատերերին մինչև 5.000.000 դրամի չափով կամ դրան համարժեք արտարժույթով տրամադրված Վարկի դեպքում):

3.1.4. գրավոր կերպով ստանալ «Սպառողական կրեդիտավորման մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով սահմանված տեղեկատվությունը Պայմանագրով Վարկառուի կողմից նշված եղանակով (գործում է մինչև 5.000.000 դրամի չափով կամ դրան համարժեք արտարժույթով «Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մասին» օրենքով սահմանված՝ գերփոքր առևտրային կազմակերպություններին և անհատ ձեռնարկատերերին մինչև 5.000.000 դրամի չափով կամ դրան համարժեք արտարժույթով տրամադրված Վարկի դեպքում),

3.2. Վարկառուն պարտավոր է՝

3.2.1. Պայմանագրով սահմանված ժամկետներում անառարկելիորեն և առանց այն հետ կանչելու մարել Վարկը և դրա վրա հաշվարկված տոկոսները, ինչպես նաև Բանկին վճարման ենթակա այլ գումարները, փոխհատուցել պարտքի բռնագանձման հետ կապված ծախսերը, ինչպես նաև Վարկառուի կողմից Պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դիմաց հաշվարկված տուժանքները, Բանկի կատարած այլ ծախսերը:

3.2.2. Վարկն օգտագործել բացառապես Պայմանագրով նախատեսված նպատակային նշանակությամբ:

3.2.3. Իր գործունեությունից ստացված հասույթները առաջնահերթ կարգով ուղղել Պայմանագրով ստանձնած պարտավորությունների կատարմանը:

3.2.4. լրացնել և ներկայացնել Բանկի կողմից տրամադրված հաշվառման հաշվետվության ձևը իր և (կամ) իր հետ փոխկապակցված անձանց վերաբերյալ, եթե Վարկառուի կողմից հաշվապահական հաշվառում չի վարվում կամ եղած հաշվառումը չի բավարարում Բանկին գնահատելու համար Վարկառուի ֆինանսական վիճակը,

3.2.5. Կատարել Պայմանագրի անբաժանելի մասը հանդիսացող «Լրացուցիչ իրավունքներ և պարտավորություններ» հավելվածով նախատեսված պարտավորությունները (եթե կնքված է այդպիսին),

3.2.6. Բանկին տրամադրված յուրաքանչյուր ֆինանսական հաշվետվության հետ Բանկին տրամադրել նաև ֆինանսական ցուցանիշների պահպանման վերաբերյալ հավաստիացում, որը կպարունակի Վարկառուի և Երաշխավորների կողմից ֆինանսական ցուցանիշների պահպանումն ապացուցող հաշվարկներ: Ընդ որում՝ յուրաքանչյուր ֆինանսական հաշվետվություն, որը Վարկառուն տրամադրում է Բանկին պետք է կազմված լինի այն սկզբունքների կիրառմամբ, որոնց կիրառմամբ կազմվել է նախորդ ֆինանսական հաշվետվությունը: Այն դեպքում, երբ ֆինանսական հաշվետվությունների կազմման սկզբունքները փոխվել են, ապա Վարկառուն Բանկին պետք է տեղեկացնի այդ մասին՝ նշելով ֆինանսական հաշվետվության կազմման փոփոխված սկզբունքների և այդ սկզբունքների կիրառման ժամանակահատվածի մասին մանրամասն նկարագրություն՝ նշելով նաև այն անհրաժեշտ տեղեկությունները (անհրաժեշտ մանրամասնությամբ), որոնք կօգնեն Բանկին օբյեկտիվորեն վերլուծել և գնահատել Վարկառուի (երաշխավորի) ֆինանսական վիճակը:

3.2.7. Բանկին տրամադրել տեղեկատվություն այն ՀՀ ընդհանուր իրավասության դատարանների կամ արբիտրաժային դատարանների/տրիբունալների վարույթներում քննվող գործերի մասին, որոնցում Վարկառուն դրամական միջոցների բռնագանձման հայցապահանջով կամ կամավոր/հարկադիր սնանկության դիմումով հանդես է գալիս որպես պատասխանող կողմ/պարտապան, կամ այնպիսի դեպքերի առաջացման մասին, որոնք կարող են Վարկառուի գործունեության, կարգավիճակի, վճարունակության վրա բացասական ազդեցություն ունենալ և վատթարացնել նրա ֆինանսական վիճակը՝ ինչպես ՀՀ-ում, այնպես էլ արտասահմանում, ինչպես նաև տեղեկացնել նշված իրադարձությունների հետևանքների վերացմանն ուղղված իր ձեռնարկած միջոցառումների մասին: Սույն ենթակետում նշված տեղեկությունները Բանկին պետք է ներկայացվեն անհապաղ՝ այն պահից, երբ Վարկառուն իմացել է այդ մասին կամ պարտավոր էր իմանալ:

3.2.8. Բանկին անհապաղ տեղեկացնել իր ցանկացած պարտավորության խախտման մասին այն պահից, երբ Վարկառուն իմացել է այդ մասին կամ պարտավոր էր իմանալ:

3.2.9. Բանկին/նոր պարտատիրոջը (Ցեսիոներին) տրամադրել համապատասխան անհրաժեշտ ամբողջ տեղեկություններն ու փաստաթղթերը (անհատ ձեռնարկատեր Վարկառուի դեպքում սույն կետը կիրառվում է այնքանով, որքանով կիրառելի է անհատ ձեռնարկատիրոջ նկատմամբ) այն դեպքում, երբ Բանկի կամ նոր պարտատիրոջ (Ցեսիոների) մոտ առաջանում է Վարկառուի տվյալների ստուգման պարտականություն կիրառելի օրենսդրության փոփոխության կամ Վարկառուի կազմակերպա-իրավական ձևի կամ քվեարկող բաժնետոմսերի (բաժնեմասերի) հարաբերակցության փոփոխության կամ Բանկի կողմից Պայմանագրից բխող որևէ կամ բոլոր պահանջների զիջման արդյունքում:

3.2.10. Պայմանագրի հիման վրա ստանձնած վարկային պարտավորություններում փոփոխությունների դեպքում (տոկոսադրույք, ժամանակացույց և այլն) այդ մասին տեղյակ պահել Երաշխավորներին:

3.2.11. ժամանակին ստանալ և պահպանել կորպորատիվ բոլոր որոշումների, թույլտվությունների, հավանությունների, համաձայնեցումների պահանջները, որոնք կիրառելի օրենսդրության համաձայն անհրաժեշտ են Պայմանագրով Վարկառուի ստանձնած պարտավորությունները ժամանակին և պատշաճ կատարելու, ինչպես նաև Պայմանագիրը դատարանում որպես ապացույց օգտագործելու հնարավորությունն ապահովելու համար:

3.2.12. ապահովել շրջակա միջավայրի պաշտպանության մասին օրենսդրության պահանջների կատարումը:

3.2.13. Բանկին անհապաղ տեղեկացնել՝

3.2.13.1. բնապահպանական վերահսկողություն իրականացնող պետական մարմնի կողմից իր նկատմամբ հարուցված վարչական վարույթների մասին՝ տրամադրելով Բանկին նաև վարչական վարույթին առնչվող բոլոր փաստաթղթերի պատճենները

3.2.13.2. բոլոր այն հանգամանքների մասին, որոնք ողջամտորեն կարող են պատճառ դառնալ բնապահպանական վերահսկողություն իրականացնող պետական մարմնի կողմից իր նկատմամբ վարչական վարույթ հարուցելու համար:

3.2.14. ժամանակին և սահմանված կարգով իրականացնել իր բոլոր հարկային պարտավորությունները և վճարել բոլոր պարտադիր վճարները, բացառությամբ այն հարկային պարտավորությունների, որոնք վիճարկվում են Վարկառուի կողմից:

3.2.15. այլ դրամային պարտավորությունների առկայության դեպքում Բանկի նկատմամբ պարտավորությունները կատարել նույն հերթին ինչ մնացածը, բացառությամբ այն դեպքերի, երբ օրենքով նախատեսված է պարտավորությունների բավարարման այլ հերթականություն:

3.2.16. Բանկի ներկայացուցիչների կողմից ստուգումներ/մոնիթորինգ անցկացնելու նպատակով՝ թույլատրել նրանց անարգել մուտքն իր ծառայողական, արտադրական, պահեստային և այլ տարածքներ, աջակցել, օժանդակել նրանց աշխատանքներին, տրամադրել բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը, հարկային և հաշվապահական հաշվետվությունները (փաստաթղթային և էլեկտրոնային), կազմակերպել կառավարման մարմինների հետ հանդիպումներ և այլն: Ընդ որում, ստուգումների ժամկետներն ու պարբերականությունը Բանկի կողմից որոշվում են միակողմանիորեն և առանց դրանք Վարկառուի հետ համաձայնեցնելու:

3.2.17. առանց Բանկի նախնական գրավոր համաձայնության չիրականացնել այնպիսի գործարքներ (մեկ կամ մի քանի փոխկապակցված) (այդ թվում՝ չտալ իր հաշիվներից անակցեպտ գանձման համաձայնություններ), որոնց արդյունքում ծանրաբեռնվում են իր ակտիվների 10 տոկոսը և ավելին: Սույն կետի իմաստով փոխկապակցված գործարքներ են

համարվում եռամսյա ժամանակահատվածում երկու կամ ավելի նույն առարկայով գործարքները, որոնք կնքվում են նույն կոնտրագենտի կամ տվյալ կոնտրագենտի հետ փոխկապակցված անձի հետ: Սույն կետի իմաստով փոխկապակցված անձինք որոշվում են «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասով: Սույն կետով նախատեսված նախնական գրավոր համաձայնությունը պահանջվում է յուրաքանչյուր դեպքում, երբ ակտիվների ծանրաբեռնվածությունը կգերազանցի համապատասխանաբար 20, 30, 40, 50, 60, 70, 80, 90 և 100 տոկոսը:

3.2.18. Պայմանագրի գործողության ընթացքում իրավաբանական հասցեի, մշտական (փաստացի) գործունեության հասցեի, բանկային վավերապայմանների, կազմակերպա-իրավական ձևի, հիմնադիր փաստաթղթերի, ղեկավարների/կառավարման մարմինների իրավասությունների փոփոխություններ (կամ ղեկավարների փոխարինում) դեպքում Բանկին գրավոր ծանուցել նշված իրադարձությունները տեղի ունենալուց առավելագույնը 10 (տասը) օրվա ընթացքում:

3.3. Բանկն իրավունք ունի՝

3.3.1. Հրաժարվել Վարկառուին Վարկը տրամադրելուց, ինչպես նաև միակողմանիորեն վերանայել տրամադրված Վարկի էական պայմանները (գումարի չափ, մարման ժամկետ, տարեկան տոկոսադրույք, Վարկի արժույթ և այլն) կամ պահանջել Վարկի մասնակի կամ ամբողջական վաղաժամկետ մարում (ընդ որում՝ վարկի ամբողջական վաղաժամկետ մարման պահանջ ներկայացնելու դեպքում Վարկի ամբողջ գումարը համարվում է ժամկետանց պահանջը ստանալու հաջորդ օրվանից) կամ դադարեցնել վարկային գծի կամ օվերդրաֆտի չօգտագործված մասի օգտագործման Վարկառուի իրավունքը, եթե՝

3.3.1.1. Վարկառուի կողմից խախտվել են կամ չեն կատարվել Պայմանագրի պահանջները,

3.3.1.2. Վարկառուի կողմից Վարկը օգտագործվել է ոչ նպատակային,

3.3.1.3. Բացահայտվել է Վարկառուի կողմից ներկայացված իրավաբանական նշանակություն ունեցող և Վարկի տրամադրման և մոնիթորինգի իրականացման համար հիմք հանդիսացող փաստաթղթերի կեղծ (վերափոխված, խմբագրված, իրականությանը չհամապատասխանող) լինելը, ինչպես նաև պարզվել է, որ Վարկառուի կողմից Պայմանագրով տրված հավաստիացումներն ու երաշխիքները եղել են սխալ, անարժանահավատ կամ մոլորեցնող,

3.3.1.4. Առկա են Վարկառուի անվճարունակությունը (սնանկության) փաստացիորեն հիմնավորող հանգամանքներ կամ փաստաթղթեր, ներառյալ՝ (սակայն չսահմանափակվելով),

ա/ «Սնանկության մասին» ՀՀ օրենքի համաձայն առկա են հաշվեկշռային անվճարունակության հիմքեր,

բ/ «Սնանկության մասին» ՀՀ օրենքի համաձայն առկա է փաստացի անվճարունակության իրավիճակ,

գ/ Վարկառուն «Սնանկության մասին» ՀՀ օրենքի համաձայն սնանկության վտանգի դիմում է ներկայացրել դատարան,

3.3.1.5. դ/ Եթե Վարկառուն բանկ է կամ վարկային կազմակերպություն և առկա են «Բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների, ներդրումային ֆոնդի կառավարիչների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» ՀՀ օրենքով նախատեսված անվճարունակության հիմքերը: Բանկի, այլ բանկերի, վարկային կամ այլ կազմակերպությունների, կամ պետական բյուջեի կամ

ցանկացած երրորդ անձանց նկատմամբ Վարկառուն ունի ժամկետանց պարտավորություններ,

3.3.1.6. Վարկառուի բանկային հաշիվներին դրվել է արգելանք,

3.3.1.7. կորել են կամ վնասվել կամ այլ կերպ արժեզրկվել են Պայմանագրով Վարկառուի պարտավորության կատարման ապահովման միջոցները, վատթարացել են նրանց պահպանման պայմանները, կամ օրենքով սահմանված կարգով դադարել է դրանց նկատմամբ սեփականության իրավունքը, և դրանք Բանկի կողմից պահանջ ներկայացնելու պահից 10 (տասը) օրվա ընթացքում չեն վերականգնվել կամ փոխարինվել համարժեք ապահովման միջոցներով,

3.3.1.8. խախտվել են Պայմանագրի կատարման ապահովման պայմանագրով նախատեսված այլ պայմանները,

3.3.1.9. որևէ պատճառով Պայմանագրի կատարման ապահովման միջոց հանդիսացող երաշխավորության պայմանագիրը, երաշխիքը կամ ապահովագրական վկայագիրը (պոլիսները) ուժը կորցրել է, այդ թվում՝ անվավեր է ճանաչվել, կամ որը՝ ըստ Բանկի, այլևս չի կարող համարվել որպես Պայմանագրի կատարման ապահովման լիարժեք միջոց (երաշխավորի, երաշխիք տվողի կամ ապահովագրական ընկերության սնանկության, այլ պարտատերերի առջև վերջիններիս կողմից դրամական պարտավորությունները չկատարելու և այլնի պատճառով),

3.3.1.10. ընդդեմ Վարկառուի հարուցված են հայցեր, որոնց հայցագնի չափը կազմում է Վարկառուի ընդհանուր ակտիվների հաշվեկշռային արժեքի 25 (քսանհինգ)%-ից ավելի (անհատ ձեռնարկատեր վարկառուի դեպքում՝ Պայմանագրի հիման վրա տրամադրված վարկերի հանրագումարի 25 (քսանհինգ) %-ից ավելի),

3.3.1.11. Վարկառուի գույքի նկատմամբ իրականացվել է հարկադիր բռնագանձման գործողություններ կամ կիրառվել է ցանկացած տեսակի սահմանափակում (արգելանքներ) ,

3.3.1.12. Վարկառուն նվազեցրել է իր կանոնադրական կապիտալի չափը, դադարեցրել է իր գործունեությունը, կամ էապես փոփոխել է այն գործունեության բնույթը, որը նա իրականացնում էր Պայմանագիրը ստորագրելու պահին (անհատ ձեռնարկատեր վարկառուների դեպքում սույն կետը կիրառվում է այնքանով որքանով կիրառելի է անհատ ձեռնարկատիրոջ նկատմամբ),

3.3.1.13. Վարկառուի գործունեությունը խոչընդոտվել է իրեն պատկանող որևէ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի որևէ հիմքով դադարման պատճառով,

3.3.1.14. Վարկառուին տրամադրված որևէ լիցենզիա, արտոնագիր կամ այլ թույլտվությունը /այսուհետ՝ «Լիցենզիա»/ ուժը կորցրել է կամ որևէ կերպ սահմանափակվել է Լիցենզիայի հիման վրա իրականացվող գործունեությունը կամ Վարկառուին տրամադրված Լիցենզիան ենթարկվել է այնպիսի փոփոխությունների, որը հնարավորություն չի տալիս Վարկառուին շարունակելու իր գործունեությունը նույն պայմաններով և ծավալներով,

3.3.1.15. Հայաստանի Հանրապետությունում ստեղծվել է լարված քաղաքական վիճակ, Հայաստանի Հանրապետությունը մտել է հայտարարված կամ չհայտարարված պատերազմի, լայնածավալ ռազմական գործողությունների մեջ, տեղի են ունեցել ապստամբություններ կամ այլ քաղաքական հուզումներ, բացառությամբ, եթե այդ դեպքերը էական ազդեցություն չունեն Վարկառուի կողմից իր՝ Պայմանագրով ստանձնած պարտավորությունների պատշաճ կատարման վրա,

3.3.1.16. Վարկառուի կառավարման համապատասխան մարմնի կողմից վերակազմակերպման, լուծարման կամ անվճարունակության մասին որոշում է կայացվել կամ տեղի են ունեցել այնպիսի դեպքեր, որոնք, ըստ գործող օրենսդրության, կարող են նման հետևանքներ առաջացնել,

3.3.1.17. Վարկառուի մասնակիցների (բաժնետերերի, անդամների) կազմի, նրանց փայամասնակցության հարաբերակցությունում կատարված փոփոխությունների, երրորդ անձանց հետ կնքած որևէ պայմանագրի կամ այլ հանգամանքների արդյունքում, Վարկառուի կառավարման մարմիններում որոշումներ կայացնելու իրավունքներ կստանան կամ ստացել են այլ անձինք, ովքեր որոշումներ կայացնելու իրավունք չեն ունեցել Պայմանագիրը կնքելու պահին,

3.3.1.18. Բանկի մոտ առկա են արժանահավատ տեղեկություններ, որոնք վկայում են այնպիսի դեպքերի հնարավոր առաջացման մասին, որոնք կարող են էապես վատթարացնել Վարկառուի ֆինանսական վիճակը կամ անհնար դարձնել Վարկառուի կողմից իր՝ Պայմանագրով ստանձնած պարտավորությունների կատարումը,

3.3.1.19. Վարկառուն միջոցներ է ձեռնարկում Բանկի հետ կնքված ցանկացած պայմանագրի լուծման (վիճարկման) ուղղությամբ, այդ թվում՝ դատական կարգով,

3.3.1.20. Պայմանագրի և/կամ Պայմանագրի կատարման ապահովման նպատակով կնքված որևէ պայմանագրի հիման վրա Վարկառուի վրա դրված որևէ պարտավորության կատարում անհնարին է դառնում դրա իրավաչափ չլինելու պատճառով,

3.3.1.21. Պայմանագիրը կամ Պայմանագրի կատարման ապահովման նպատակով կնքված որևէ պայմանագիր ճանաչվում է անվավեր կամ չկնքված,

3.3.1.22. Վարկառուի աուդիտորները Վարկառուի որևէ ֆինանսական հաշվետվության վերաբերյալ տվել են վերապահումով եզրակացություն,

3.3.1.23. Չի կնքվել Պայմանագրով ստանձնած պարտավորությունների կատարման ապահովման միջոց հանդիսացող գրավադրված գույքի ապահովագրության պայմանագիր կամ չի երկարաձգվել գրավադրված գույքի ապահովագրության պայմանագրի ժամկետը, կամ ապահովագրողի կողմից ապահովագրության պայմանագրով փոխվել է շահառուն (գրավադրված գույքի ապահովագրության պահանջի առկայության դեպքում),

3.3.1.24. Վարկառուի կողմից խոչընդոտվել են Պայմանագրով նախատեսված Վարկի նպատակային օգտագործումը ստուգելու կամ ֆինանսական մոնիթորինգ իրականացնելու Բանկի անվերապահ իրավունքները: Ընդ որում, Պայմանագրի իմաստով խոչընդոտում է համարվում Վարկառուի կողմից Բանկին վերապահված իրավունքներից օգտվելու հնարավորության ցանկացած արգելք, խախտում, կետանց, տեղեկությունների չտրամադրում կամ ոչ արժանահավատ տեղեկությունների տրամադրում և այլն:

3.3.1.25. Վարկառուին կամ վերջինիս հիմնադրին սնանկ ճանաչելու դիմում /հարկադիր կամ կամավոր/ ներկայացվելու դեպքում,

3.3.1.26. Որևէ քրեական գործում Վարկառուին կամ վերջինիս հիմնադրին որպես կասկածյալ կամ մեղադրյալ ներգրավվելու դեպքում կամ վերջիններիս նկատմամբ քրեական հետապնդում հայտարարված լինելու դեպքում,

3.3.1.27. Վարկառուի կողմից հարկային պարտավորությունների չկատարման և/կամ ժամանակին չկատարման փաստի դեպքում,

3.3.1.28. Վարկառուի կամ վերջինիս հիմնադրի նկատմամբ 1 մլն ՀՀ դրամը գերազանցող գումարի բռնագանձման պահանջի բավարարման դեպքում,

3.3.1.29. Վարկառուի հիմնադրի ազատազրկման հետ կապված դատավճռի կայացման դեպքում դատական կարգով քրեական կամ քաղաքացիական օրենսգրքով մեղավոր ճանաչելու դեպքում, որի արդյունքում պահանջը կգերազանցի 1 մլն ՀՀ դրամը, կամ առկա կլինի ազատազրկման որոշում,

3.3.1.30. Փողերի լվացման տիպաբանություններով գործարքների իրականացման դեպքում կամ փողերի լվացման ցուցակներում հայտնվելու դեպքում և Բանկի քաղաքականությամբ սահմանված պատժամիջոցների ցանկերում հայտնվելու դեպքում,

3.3.1.31. Վերջին մեկ տարվա ընթացքում Բանկում ունեցած պարտավորությունների գծով 30 և ավելի ժամկետանց օր ունենալու դեպքում,

3.3.1.32. Այլ ֆինանսական կազմակերպությունում դասակարգվելու դեպքում,

3.3.1.33. Վարկառուի նախորդ ժամանակաշրջանի շահութահարկի հաշվետվությամբ և/կամ աուդիտ հաշվետվությամբ արձանագրված վնասի դեպքում,

3.3.1.34. Վարկառուի սեփական կապիտալի նվազում նախորդ հաշվետու ժամանակաշրջանի համեմատությամբ՝ համաձայն շահութահարկի հաշվետվության և/կամ աուդիտ հաշվետվության,

3.3.1.35. Վարկառու իրավաբանական անձը /անհատ ձեռնարկատեր/ գործունեության դադարեցման դեպքում համաձայն ՀՀ ԱՆ ԻԱ պետական ռեգիստրի գործակալության տեղեկատվական բազայի,

3.3.1.36. Վարկառու իրավաբանական անձի /անհատ ձեռնարկատեր/ գործունեության դադարեցման դեպքում /ժամանակավոր դադարեցում/՝ համաձայն ՊԵԿ-ի:

3.3.2. Միակողմանիորեն փոփոխել Վարկի էական պայմանները, այդ թվում և ոչ միայն՝ Վարկի տոկոսադրույքը և արժույթը կամ պահանջել գործող պարտավորության վաղաժամկետ մասնակի կամ ամբողջական մարում կամ դադարեցնել վարկային գծի կամ օվերդրաֆտի չօգտագործված մասի օգտագործման Վարկառուի իրավունքը հետևյալ դեպքերում.

3.3.2.1. Պայմանագրի կնքման պահի համեմատ ՀՀ ԿԲ կողմից հրապարակված ԱՄՆ դոլարի փոխարժեքը ավելի քան 5 (հինգ) տոկոսով տատանման դեպքում,

3.3.2.2. Պայմանագրի կնքման պահի համեմատ ՀՀ ԿԲ կողմից հրապարակված ՌԴ ռուբլու փոխարժեքի ավելի քան 10 (տասը) տոկոսով տատանման դեպքում,

3.3.2.3. ՀՀ ԿԲ կողմից ՀՀ որևէ առևտրային բանկի լիցենզիայի հետ կանչման դեպքում,

3.3.2.4. ՀՀ գործազրկության հրապարակվող ցուցանիշի ավելի քան 10 (տասը) տոկոսով աճի դեպքում,

3.3.2.5. ՀՀ ԿԲ կողմից սահմանված արտարժույթով ներգրավված միջոցների պարտադիր պահուստավորման նորմատիվի և/կամ լոմբարդային ՌԵՊՈ-ի տոկոսադրույքի փոփոխման դեպքում,

3.3.2.6. ՀՀ ՀՆԱ նվազման դեպքում,

3.3.2.7. Արտերկրից ՀՀ կատարվող դրամական փոխանցումների հրապարակվող ցուցանիշի ավելի քան 10 (տասը) տոկոսով նվազման դեպքում,

3.3.2.8. ՀՀ կամ հարևան երկրում/տարածքներում պատերազմի հայտարարման կամ պատերազմական գործողությունների դեպքում,

3.3.2.9. ՀՀ կողմից արտակարգ դրության հայտարարման դեպքում,

3.3.2.10. ՀՀ-ում արտահերթ խորհրդարանական ընտրությունների նշանակման դեպքում,

3.3.2.11. Բանկի կողմից հրապարակված լողացող տոկոսադրույքի հիմքում օգտագործվող հրապարակային բազային տոկոսադրույքի ավելի քան 2 (երկու) տոկոսային կետով տատանման դեպքում մեկ տարվա ընթացքում, /կիրառվում է լողացող տոկոսադրույքի դեպքում/

3.3.2.12. Պայմանագրի կնքման պահի համեմատ միջազգային շուկայում նավթի (BRENT) և ոսկու հրապարակվող գների ավելի քան 20 (քսան) տոկոսով տատանման դեպքում,

3.3.2.13. ՀՀ կենտրոնական բանկի սահմանած բանկային տոկոսի հաշվարկային դրույքի 1(Մեկ) տոկոսային կետով բարձրացման դեպքում,

3.3.2.14. Վարկի արժույթի 5 (հինգ) տոկոսային կետով արժեզրկման դեպքում,

3.3.2.15. Վարկը տրամադրելու համար եկամուտների հաշվարկման (Վարկառուի վարկունակության գնահատման) հիմք հանդիսացող եկամուտների դադարեցման դեպքում,

3.3.2.16. Բանկի կողմից ներգրավվող (այդ թվում՝ այլ վարկատուների կողմից վերաֆինանսավորվող) վարկային ռեսուրսների 0,5(Զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսային կետով բարձրացման կամ վերաֆինանսավորման դադարեցման դեպքում,

3.3.2.17. վարկային ռեսուրսների միջբանկային շուկայում LIBOR կամ EURIBOR երեքամսյա տոկոսադրույքի 1(մեկ) տոկոսային կետով բարձրացման (եթե վարկը արտարժույթով է) դեպքում:

Ծանուցում՝ ՀՀ ԿԲ սահմանած բանկային տոկոսի հաշվարկային դրույքի չափի, արտարժույթով ներգրավված միջոցների պարտադիր պահուստավորման նորմատիվի, լոմբարդային ՌԵՊՈ-ի տոկոսադրույքի փոփոխությանը, ինչպես նաև վարկի արժույթի փոփոխությանը կարելի է ծանոթանալ www.cba.am կայքում, իսկ վարկային ռեսուրսների միջբանկային շուկայում տոկոսադրույքի (LIBOR կամ EURIBOR) փոփոխությանը համապատասխանաբար www.global-rates.com և www.euribor-rates.eu կայքերում:

Ընդ որում, սույն կետում նշված Վարկի տոկոսադրույքի կամ արժույթի փոփոխության մասին Բանկը Վարկառուին ծանուցում է էական պայմանները փոփոխելու օրվանից առնվազն 15 (տասնհինգ) օրացուցային օր առաջ:

3.3.2.18. շուկայում (այդ թվում՝ արժութային) տեղի ունեցած փոփոխությունների արդյունքում Վարկի և գրավի հարաբերակցության փոփոխության դեպքում, մասնավորապես Վարկի և գրավի արժեքները հավասարվելու կամ Վարկի գումարը գրավի արժեքից գերազանցելու (վարկի արժեքի մեջ ներառվում է նաև դրա նկատմամբ հաշվարկվող տոկոսագումարները), ցանկացած ժամանակ առանց լրացուցիչ ծանուցման գրավ հանդիսացող դրամական միջոցներից անակնկալ գանձել պարտքի չափին համապատասխան գումար (margin call) (գործում է դրամական միջոցների գրավի դեպքում):

3.3.3. Պայմանագրով և Կանոններով սահմանված պարտավորությունների խախտման, ինչպես նաև Կանոնների 3.3.1. և 3.3.2 Նշված կետում առկա հանգամանքներից որևէ մեկն առաջանալու դեպքում Բանկն իրավունք ունի ցանկացած պահի իրականացնել ներքոշարադրյալ գործողությունները.

Գրավոր ծանուցագրով Վարկառուին տեղեկացնել դրանում նշված ժամկետում Վարկը մարելու մասին և Պայմանագրով Վարկառուին տրամադրված և նրա կողմից չմարված դրամական միջոցները հայտարարել ժամկետները լրացած (ժամկետանց) և անհապաղ վճարման ենթակա (հետ վերադարձման), որից հետո դրանք դառնում են այդպիսին, դրանց նկատմամբ հաշվեգրվող տոկոսները (այդ թվում՝ տույժեր և տուգանքներ) հաշվարկվում են ժամկետանց վարկերի համար նախատեսված ռեժիմով:

Ընդ որում, Վարկառուի կողմից Բանկի հանդեպ դրամական պարտավորությունների առաջացման պահից Վարկառուն իրավունք է վերապահում Բանկին, վճարման ենթակա գումարները՝ այսինքն իր պարտավորությունների դիմաց Բանկին վճարման ենթակա այն գումարները, որոնց ժամկետները լրացել են, անվիճելի (անակցեպտ) կարգով, առանց Վարկառուի լրացուցիչ գրավոր հանձնարարության, գանձել Բանկում ունեցած բանկային բոլոր հաշիվներից: Վարկառուն հանձնարարում է, իսկ Բանկը պարտավորվում է Վարկի արժույթից տարբերվող՝ Բանկում Վարկառուի ունեցած համապատասխան հաշիվներում դրամական միջոցների առկայության դեպքում, նշված արժույթները փոխարկել (արտարժույթի առք/վաճառք) Վարկին համապատասխան արժույթի:

3.3.4. Իր համար ընդունելի պարբերականությամբ Վարկառուից պահանջել Վարկերի նպատակային օգտագործումը, նրա ֆինանսա-տնտեսական վիճակը, Վարկի ապահովվածությունը և Պայմանագրով նախատեսված այլ հանգամանքները հաստատող տեղեկությունների և փաստաթղթերի տրամադրում:

3.3.5. Պայմանագրի գործողության ընթացքում հսկողություն սահմանել Վարկառուի բոլոր հաշիվների և դրամական այլ միջոցների նկատմամբ:

3.3.6. Վարկառուի կողմից Պայմանագրի կամ սույն կանոնների որևէ դրույթի խախտման, Պայմանագրով նախատեսված ժամկետներում Վարկառուի կողմից պարտավորությունները չկատարելու կամ մասնակի կատարելու դեպքում ձեռնարկել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և Պայմանագրով նախատեսված բոլոր անհրաժեշտ գործողությունները (հաշիվներից անակցեպտ բռնագանձում, գրավի առարկայի իրացում, հետագա վարկավորման դադարեցում, Վարկի ամբողջ գումարի վաղաժամկետ մարման պահանջի ներկայացում և այլն)՝ Վարկառուի պարտականությունների կատարումն ապահովելու համար:

3.3.7. Վարկառուի կողմից Պարտավորությունները ժամանակին չկատարելու կամ մասնակի կատարելու դեպքում իր իրավունքներն ու օրինական շահերը պաշտպանելու անհրաժեշտությունից ելնելով՝ օրենքով սահմանված կարգով դատարանին տրամադրել Վարկառուի հաշիվների վերաբերյալ տեղեկություններ:

3.3.8. ՊԱՅՄԱՆԱԳՐՈՎ ԿԱՄ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԺԱՄԿԵՏՆԵՐՈՒՄ ՎԱՐԿԱՌՈՒԻ ԿՈՂՄԻՑ ԻՐ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՉԿԱՏԱՐԵԼՈՒ ԿԱՄ ՈՉ ՊԱՏՇԱՃ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ՎԱՐԿԱՏՈՒՆ 3 (ԵՐԵՔ) ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՎԱՐԿԱՌՈՒԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՅԴ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ Է ՎԱՐԿԱՅԻՆ ԲՅՈՒՐՈ:

3.3.9. Պայմանագրի հիման վրա իրեն պատկանող իրավունքը (պահանջը) առանց Վարկառուի համաձայնության գործարքով փոխանցել (զիջել) այլ անձի: Վարկառուն սույնով հավաստում է, որ սույն կանոնների կիրառմամբ վարկավորման դեպքում Վարկատուի անձն իր համար որևէ նշանակություն չունի:

3.4. Պայմանագրի գործողության ընթացքում Բանկը պարտավորվում է՝

3.4.1. Վարկի ձևակերպումներն իրականացնել Պայմանագրի պայմաններին համապատասխան, ժամանակին և սահմանված կարգով հաշվառում տանել Վարկի շարժի, մարումների, տոկոսագումարների հաշվառման վերաբերյալ, Վարկառուի պահանջով տրամադրել անհրաժեշտ տեղեկություններ:

3.4.2. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով պահպանել Պայմանագրի գաղտնիությունը:

3.4.3. Ոչ պակաս, քան երեսնօրյա պարբերականությամբ, Վարկառուին ներկայացնել «Սպառողական Կրեդիտավորման մասին» ՀՀ օրենքով և այլ իրավական ակտերով նախատեսված պարտադիր ներկայացման տեղեկատվությունը, այսուհետ՝ «Պարտադիր ներկայացման տեղեկատվություն», Վարկառուի նախընտրած եղանակով: (գործում է «Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մասին» օրենքով սահմանված՝ գերփոքր առևտրային կազմակերպություններին և անհատ ձեռնարկատերերին մինչև 5.000.000 դրամի չափով կամ դրան համարժեք արտարժույթով տրամադրված Վարկի դեպքում):

4. ԵՐԱՇԽԻՔՆԵՐ ԵՎ ՀԱՎԱՍՏԻԱՑՈՒՄՆԵՐ

4.1. Կնքելով Պայմանագիրը՝ Վարկառուն հայտարարում և երաշխավորում է, որ՝

- ունի իր գույքը, ակտիվներն ու եկամուտները տիրապետելու, օգտագործելու, տնօրինելու և ներկա կարգավիճակով գործունեություն ծավալելու անվերապահ իրավունք և լիարժեք իրավասություններ, ինչպես նաև իր գործունեությունն իրականացնում է կիրառելի օրենսդրությանը համապատասխան,
- Օժտված է լիարժեք իրավունակությամբ, Պայմանագիրը կնքելու և վարկ ստանալու իրավունք ունի, ինչպես նաև կատարելու Պայմանագրով նախատեսված այլ պարտավորություններ, և Վարկառուի կողմից ընդունվել են Պայմանագիրը կնքելու համար անհրաժեշտ կորպորատիվ բոլոր որոշումները, թույլտվությունները, հավանությունները, համաձայնեցումները, արտոնագրերը, արտոնությունները, պետական գրանցման վկայականները, նոտարական վավերացումները, նշված փաստաթղթերը ստորագրվել են դրանց իրավասությունը ունեցող Վարկառուի կառավարման մարմինների և այլ պաշտոնատար անձանց (մասնակիցների, բաժնետերերի, խորհրդի նախագահի և անդամների, գործադիր մարմնի ղեկավարի, անդամների կամ այլ իրավասու անձանց) կողմից և համապատասխանում են իրականությանը,
- Պայմանագիրը օրինական է, վավեր և Վարկառուի համար պարտադիր կատարման, ինչպես նաև այն, որ պայմանագրի պայմաններին և ՀՀ գործող օրենսդրությանը համապատասխան, պայմանագրով ստանձնած պարտավորությունների կատարելը վարկառուին կարող է պարտադրվել հարկադիր կարգով,
- Պայմանագիրը կազմված է այնպես, որ հնարավոր է դրա կատարումն իրականացնել ՀՀ օրենսդրությամբ նախատեսված հարկադիր կարգով:
- Վարկառուն իր գործունեությունն իրականացնում է ցանկացած կիրառելի օրենսդրության համապատասխան, առանց օրենսդրական խախտումների, եթե առկա են խախտումներ, ապա դրանք չեն կարող Վարկատուի կարծիքով առաջացնել անբարենպաստ հետևանքներ: Վարկառուն օրենքով նախատեսված կարգով և ժամկետներում կատարում է իր հարկային պարտավորությունները և հաշվետվությունների ներկայացումը:

- Վարկառուի կողմից Պայմանագրով ստանձնած և կատարման ենթակա պարտավորությունները չեն առաջացնում՝

ա/ Վարկառուի հիմնադիր փաստաթղթերով և ներքին իրավական ակտերով նախատեսված որևէ դրույթի խախտում,

բ/ Վարկառուի կողմից երրորդ անձանց տրամադրված իրավունքների խախտում, կամ

գ/ որևէ դատական կամ վարչական ակտի խախտում,

դ/ ՀՀ գործող օրենսդրության դրույթների խախտում,

- կայացված չէ (չեն) Վարկառուից դրամական միջոցներ կամ այլ գույք բռնագանձելու որևէ դատական, արբիտրաժային, կամ վարչական որոշում (որոշումներ), որի(որոնց) գինը, կամ արժեքը գերազանցում է Վարկառուի ընդհանուր ակտիվների հաշվեկշռային արժեքի 25%-ը, և որը (որոնք) Պայմանագրով Վարկառուի ստանձնած պարտավորությունները կատարելու համար կարող են առաջացնել բացասական հետևանքներ,
- Վարկառուի կողմից Պայմանագրի կնքումը չի առաջացնում Վարկառուի կողմից իր որևէ այլ պարտավորության խախտում, ինչպես նաև բացակայում են ցանկացած այլ հանգամանքներ կամ պարտավորություններ, որոնք ենթադրում են Վարկառուի կողմից իր որևէ պարտավորության խախտում և որոնք խոչընդոտում են կամ ողջամտորեն ենթադրվում է, որ կարող են խոչընդոտել Վարակռուին իր կողմից Պայմանագրի կատարմանը:
- Պայմանագրի կնքման համար չեն պահանջվում որևէ նոտարական վավերացումներ կամ պետական և ոչ պետական գրանցումներ, բացառությամբ՝

ա/ Պայմանագրի կատարման ապահովման նպատակով կնքվող անշարժ գույքի գրավի պայմանագրերի նոտարական վավերացման և այդ պայմանագրերից բխող գրավի իրավունքները գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մարմնում պետական գրանցման,

բ/ Պայմանագրի կատարման ապահովման նպատակով կնքվող շարժական գույքի (այդ թվում՝ ընկերության բաժնեմասերի) գրավի պայմանագրերից բխող իրավունքները շարժական գույքի նկատմամբ ապահովված իրավունքների պետական գրանցման գործակալությունում (կամ համապատասխան մարմնում) պետական գրանցման,

գ/ Պայմանագրի կատարման ապահովման նպատակով կնքվող արժեթղթերի գրավի իրավունքը համապատասխան հաշվի օպերատորի մոտ գրանցման համար:

- Վարկառուի կողմից Վարկատուին ներկայացված վերջին հաշվետու ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվությունները՝

ա/ Կազմված են ՀՀ օրենսդրության համապատասխան,

բ/ բոլոր էական հարաբերություններում արտացոլում են Վարկառուի իրական ֆինանսական վիճակը տրման օրվա դրությամբ,

բացառությամբ տվյալ ֆինանսական հաշվետվությունում այլ բան նախատեսված լինելու դեպքում,

- Սույն մասում նշված ֆինանսական հաշվետվության կազմման պահից մինչ այժմ տեղի չեն ունեցել այնպիսի իրադարձություններ, որոնք էապես փոխել են Վարկառուի ֆինանսական վիճակը:
- Որևէ դատարանի կողմից ստացված չէ երրորդ անձանց որևէ դիմում Վարկառուին սնանկ (անվճարունակ) ճանաչելու և (կամ) Վարկառուի հանդեպ սնանկության վարույթ հարուցելու վերաբերյալ, Վարկառուի կողմից որոշում կայացված չէ կամավոր սնանկության (լուծարման)

վերաբերյալ, իրավասու դատարանի կողմից որոշում կայացված չէ Վարկառուին սնանկ ճանաչելու (լուծարելու) կամ ֆինանսական առողջացման վերաբերյալ, Վարկառուի հանդեպ նշանակված չէ սնանկության գործով ժամանակավոր կառավարիչ կամ կառավարիչ և բացակայում են նմանատիպ այլ գործողություններ և միջոցներ,

- Վարկառուի կողմից Բանկին տրամադրված հաշվետվությունները, հաշվապահական և այլ փաստաթղթերն ու տեղեկությունները արժանահավատ են, ամբողջական և ճիշտ, և ինքը չի թաքցրել այնպիսի հանգամանքներ, որոնք՝ դրանց բացահայտման դեպքում, կարող են բացասական ազդեցություն ունենալ Բանկի կողմից Պայմանագրի պայմաններին համապատասխան Վարկառուին վարկ տրամադրելու որոշման վրա: Ընդ որում՝ սույն մասում նշված տեղեկությունների տրամադրումից հետո չեն ծագել այնպիսի հանգամանքներ, որոնք էապես փոխել են Բանկին ներկայացված տեղեկությունների և Վարկառուի ֆինանսական վիճակի իրական դրությունը, ինչպես նաև Վարկառուի մոտ չեն ծագել որևէ պարտավորություններ, որոնց բացահայտման դեպքում Բանկին ներկայացված տեղեկությունները կդառնային ոչ արժանահավատ կամ Վարկառուի ֆինանսական վիճակը օբյեկտիվորեն չարտացոլող:
- Ի ապահովումն Պայմանագրի կատարման տրամադրված ապահովման միջոցների նկատմամբ Բանկն ունի առաջնահերթ բավարարման իրավունք և որևէ երրորդ անձ չունի այդ ապահովման միջոցների նկատմամբ առաջնահերթ կարգով բռնագանձման իրավունք:
- Պայմանագրի կնքման համար որևէ պետական պարտադիր վճարներ կամ հարկեր, չեն պահանջվում, բացառությամբ՝

ա/ շարժական գույքի նկատմամբ ապահովված իրավունքների պետական գրանցման համար նախատեսված պետական տուրքի և գրանցման վճարի (առկայության դեպքում),

բ/ անշարժ գույքի նկատմամբ գրավի իրավունքի պետական գրանցման համար նախատեսված պետական տուրքի և պետական գրանցման համար վճարի

գ/ Բաժնետոմսերի և այլ արժեթղթերի գրավի գրանցման համար հաշվի օպերատորի վճարների,

դ/ Ապահովման միջոցների պայմանագրերի նոտարական վավերացման համար նախատեսված վճարների,

- Պայմանագրի նկատմամբ կիրառելի չեն գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջները:
- Վարկառուն պահպանում է ՀՀ օրենսդրությամբ (այդ թվում՝ ՀՀ կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով) նախատեսված ֆինանսական կազմակերպություններին առաջադրվող պահուստավորման նորմատիվներն ու պահանջները (Կիրառելի է, եթե Վարկառուն ֆինանսական կազմակերպություն է):
- ՀՀ կենտրոնական բանկի կողմից Վարկառուի նկատմամբ չեն կայացվել պահուստավորման նորմատիվների (պահանջների) խախտման համար անբարենպաստ վարչական ակտեր (Կիրառելի է, եթե Վարկառուն ֆինանսական կազմակերպություն է):

4.2. Կանոններով նախատեսված հավաստիացումներն ու երաշխավորությունները Վարկառուի կողմից տրվում են Պայմանագրի կնքման օրվա դրությամբ՝ բացառությամբ այն դեպքերի, երբ որևէ կոնկրետ հավաստիացում կամ երաշխավորություն տրված է կոնկրետ պահի դրությամբ և կոնկրետ ժամանակահատվածի համար: Վարկառուն ընդունում է, որ Բանկը Պայմանագիրը կնքում է ամբողջությամբ հիմնվելով սույն բաժնում կատարված իր հայտարարությունների և

երաշխիքների վրա, և սույն բաժնի որևէ դրույթի իրականությանը չհամապատասխանելու հետևանքների (այդ թվում՝ Պայմանագիրը մասնակիորեն, կամ ամբողջությամբ անվավեր ճանաչելու) համար պատասխանատվությունն ամբողջությամբ կրում է Վարկառուն:

4.3. Պայմանագրի գործողության ողջ ժամկետի ընթացքում սույն բաժնում առկա հավաստիացումներն ու երաշխիքները պետք է լինեն ճիշտ, արժանահավատ և իրականությանը համապատասխանող:

4.4. Կողմերն երաշխավորում են, որ Պայմանագիրը իրենց և իրենց իրավահաջորդների համար համարվում է վավեր և պարտադիր՝ անկախ ցանկացած հանգամանքից, ինչպես նաև երրորդ անձանց կողմից Պայմանագիրը անվավեր ճանաչելու պահանջից: Կողմերը երաշխավորում են, որ որևէ քայլ չեն ձեռնարկի Պայմանագիրը անվավեր ճանաչելու ուղղությամբ և ցանկացած դատական ատյանում կպնդեն Պայմանագիրն ամբողջությամբ իրենց համար վավեր լինելու փաստը:

5. ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ ԵՐԱՇԽԱՎՈՐՈՒԹՅԱՄԲ

5.1. Վարկը Երաշխավորությամբ ապահովման դեպքում գործում են հետևյալ պայմանները.

5.1.1. Երաշխավորը, կնքելով Պայմանագիրը կամ Երաշխավորության պայմանագիրը, պարտավորվում է սեփականության իրավունքով իրեն պատկանող ամբողջ գույքով և դրամական միջոցներով Վարկատուի առջև համապարտ պատասխանատվություն կրել Պայմանագրով Վարկառուի ստանձնած պարտավորությունների պատշաճ կատարման համար:

5.1.2. Եթե ֆիզիկական անձ Երաշխավորը չի հանդիսանում և/կամ Պայմանագրով չի հայտարարում, որ Պայմանագրով սահմանված պայմաններով փոխկապակցված անձ է ապա Երաշխավորը պարտավորվում է սեփականության իրավունքով իրեն պատկանող ամբողջ գույքով և դրամական միջոցներով Վարկատուի առջև կրել սուբսիդիար պատասխանատվություն Պայմանագրով Վարկառուի ստանձնած պարտավորությունների պատշաճ կատարման համար:

5.1.3. Երաշխավորությամբ ապահովված Վարկատուի պահանջը փաստացի բավարարման պահին ներառում է վարկի մայր գումարը, տոկոսագումարը, սպասարկման վճարները և միջնորդավճարները, տուժանքն ու վնասները, պարտքի բռնագանձման հետ կապված ծախսերը:

5.1.4. Երաշխավորը Վարկատուի առջև պատասխանատվություն է կրում նույն ծավալով, ինչ Վարկառուն՝ ներառյալ Վարկի մայր գումարը, տոկոսագումարը, սպասարկման վճարները և միջնորդավճարները, տուժանքն ու վնասները, պարտքի բռնագանձման հետ կապված ծախսերը և այլն:

5.1.5. Երաշխավորը պարտավոր է Վարկառուի կողմից Պայմանագրով ստանձնած դրամական պարտավորությունները չկատարելու դեպքում, Բանկի վճարման պահանջը ստանալուց հետո 10 (տասը) աշխատանքային օրվա ընթացքում վճարել Վարկառուի չվճարված բոլոր գումարները: Պայմանագրով նշված պարտավորությունները չկատարելու դեպքում Երաշխավորը իրավունք է վերապահում Բանկին Վարկառուի կողմից Բանկին վճարման ենթակա բոլոր գումարները անառարկելիորեն և անակցեպտ գանձել դրամական միջոցներից: Ընդ որում, պարտավորությունների չափին համապատասխան գումարը անակցեպտ գանձվում է Երաշխավորի այն արժույթով հաշվից, որով տրամադրվել է Վարկը, իսկ դրանում միջոցների բացակայության կամ անբավարարության դեպքում՝ այլ

արժութային հաշիվներից՝ Բանկի ընտրությամբ, որի դեպքում արժույթների փոխարկումն իրականացվում է այդ պահին Բանկում գործող համապատասխան փոխարժեքով:

5.1.6. Կնքելով Պայմանագիրը կամ Երաշխավորության պայմանագիրը՝ Երաշխավորը գիտակցում և ընդունում է, որ Վարկառուի կողմից Պայմանագրով նախատեսված որևէ պարտավորություն չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու, ինչպես նաև Վարկը որևէ ծրագրային ֆինանսավորման շրջանակներում տրամադրված լինելու դեպքում վերաֆինանսավորող կազմակերպության կողմից վերաֆինանսավորում չտրամադրելու, վերաֆինանսավորման պայմանների փոփոխության կամ վերաֆինանսավորման դադարեցման կամ Վարկի գումարը ետ պահանջելու, Վարկը Վարկառուի կողմից ոչ նպատակային օգտագործելու, ինչպես նաև ՀՀ օրենսդրությամբ, Պայմանագրով և Կանոններով նախատեսված այլ դեպքերում Բանկն իրավունք ունի պահանջել Վարկի վաղաժամկետ մարում կամ առանց Վարկառուի նախնական համաձայնության վերանայել Պայմանագրի դրույթները և (կամ) պայմանները, այդ թվում՝ Վարկի մնացորդի նկատմամբ հաշվեգրվող տոկոսագումարի չափը՝ Վարկի մնացորդի նկատմամբ հաշվեգրելով մինչև ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված բանկային տոկոսի հաշվարկային դրույքի կրկնապատիկը:

5.1.7. Վարկառուի իրավունքներն ու պարտականությունները ընդհանուր իրավահաջորդության կարգով ժառանգներին (իրավահաջորդներին) փոխանցվելու դեպքում Պայմանագիրը՝ երաշխավորության մասով, համարվում է կնքված ի ապահովումն Վարկառուի ժառանգների (իրավահաջորդների) կողմից Պայմանագրով ստանձնած (իրավահաջորդներին փոխանցված) պարտավորությունների կատարման:

6. ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1. Վարկառուի կողմից Վարկը և տոկոսագումարը մասնակի կամ ամբողջությամբ մարելու (վերադարձնելու) ժամկետները կամ Պայմանագրից բխող պարտավորությունները խախտելու դեպքում հաշվարկվում են տոկոսներ և/կամ տուժանքներ՝ Պայմանագրով և/ կամ Տեղեկատվական ամփոփագրով նախատեսված չափով, մինչև ժամկետանց պարտավորության մարումը:

6.2. Վարկառուն պատասխանատվություն է կրում Բանկից թաքցված, Բանկին ներկայացված անարժանահավատ կամ կեղծ կամ շինծու կամ խեղաթյուրված տեղեկությունների համար և յուրաքանչյուր դեպքի համար վճարում է տուգանք՝ Վարկի գումարի 1 (մեկ) տոկոսի չափով:

6.3. Տուժանքի (տուգանք և տույժ) և տոկոսների վճարումը Վարկառուին չի ազատում իր ստանձնած պարտավորությունները կատարելուց, ինչպես նաև չի կարող որևէ կերպ սահմանափակել պարտավորությունների վաղաժամկետ կատարում պահանջելու Բանկի իրավունքը:

6.4. Վարկառուն պատասխանատու է ՀՀ օրենսդրությամբ և Պայմանագրով ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար՝ անկախ մեղքի բացակայությունից և (կամ) անհաղթահարելի ուժի՝ արտակարգ և անկանխելի հանգամանքների ազդեցությունից: Բանկի գրավոր համաձայնությամբ Պայմանագրով սահմանված համապատասխան ժամկետները կարող են երկարաձգվել անհաղթահարելի ուժի ազդեցության ժամանակահատվածով: Վարկառուն կարող է ազատվել բացառապես տույժերի և տուգանքների վճարման պարտավորությունից, սակայն ոչ Պայմանագրով ստանձնած պարտավորությունների կատարումից:

6.5. Պայմանագրով ստանձնած պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում Վարկառուն պարտավորվում է Բանկին փոխհատուցել բոլոր տեսակի լրացուցիչ ծախսերը, որոնք կկատարվեն Բանկի կողմից:

6.6. Պայմանագրով սահմանված տուժանքի տարեկան առավելագույն չափը չի կարող գերազանցել ՀՀ Կենտրոնական բանկի սահմանած բանկային տոկոսի հաշվարկային դրույքի քառապատիկը, եթե օրենքով այլ բան սահմանված չէ: Պայմանագրով սահմանված բոլոր տուժանքների հանրագումարի չափը չի կարող գերազանցել տվյալ պահին առկա պարտքի հիմնական գումարը:

7. ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒՄ

7.1. Պայմանագրով Կողմերի ուղարկած ցանկացած գրավոր ծանուցում կամ հաղորդագրություն պետք է կատարվի հայերեն, իսկ ոչ ռեզիդենտ Վարկառուի դեպքում՝ Կողմերի համաձայնությամբ՝ այլ լեզվով:

7.2. Պայմանագրով պահանջվող կամ նախատեսվող ցանկացած պահանջ, ծանուցում կամ այլ հաղորդում, որը չի ենթադրում ՀՀ օրենսդրությամբ պարտադիր ներկայացման ենթակա տեղեկատվության հաղորդում, համարվում է պատշաճ ձևով ուղարկված, եթե ստորագրված է իրավասու անձի կողմից և կնիքված է (առկայության դեպքում) և հասցեատիրոջը առաքվել է՝ առձեռն՝ ցրիչի (այլ երրորդ անձի) միջոցով, կամ պատվիրված փոստային նամակով՝ Պայմանագրով Կողմերի նշված հասցեներով, կամ այն էլեկտրոնային տեսքով ուղարկվել է Վարկառուի վերջին հայտնի էլեկտրոնային փոստի հասցեով կ կամ ներկայացվել է Բանկի առցանց համակարգերի միջոցով:

7.3. Վարկառուն պարտավոր է անմիջապես գրավոր անհապաղ տեղեկացնել Բանկին իր տվյալների և պայմանագրին վերաբերվող այլ փոփոխությունների մասին: Փոփոխությունների մասին Բանկին չտեղեկացնելու բոլոր իրավական հետևանքների ռիսկը կրում է Վարկառուն:

7.4. Կնքելով Պայմանագիրը՝ Վարկառուն տալիս է Բանկին իր համաձայնությունը՝ սպասարկման պատշաճ ապահովման և անվտանգության նկատառումներից ելնելով, իրականացնելու Վարկառուի և Բանկի միջև կատարվող հեռախոսազանգերի ձայնագրություն: Տվյալ ձայնագրությունները ունեն ապացուցողական ուժ և միմյանց միջև վեճերի ծագման դեպքում օգտագործվում են որպես թույլատրելի և պատշաճ ապացույց:

7.5. Կնքելով Պայմանագիրը՝ Վարկառուն տալիս է Բանկին իր համաձայնությունը՝ Բանկի տարածքում Վարկառուին սպասարկելիս իրականացնել տեսաձայնագրություններ և ձայնագրումներ: Տվյալ ձայնագրությունները (տեսաձայնագրությունները) ունեն ապացուցողական ուժ և միմյանց միջև վեճերի ծագման դեպքում օգտագործվում են որպես թույլատրելի և պատշաճ ապացույց:

8. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՈՒՄԸ

8.1. Պայմանագրի շուրջ ծագած վեճերն ու տարաձայնությունները լուծվում են ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի միջոցով:

8.2. Կողմերը, օգտվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով 297-րդ հոդվածով նախատեսված իրենց իրավունքից, համաձայնվում են, որպեսզի Պայմանագրից բխող բոլոր (անկախ գումարի չափից) վեճերի քննությունն իրականացվի պարզեցված վարույթի կարգով:

8.3. Վարկառուն, կնքելով Պայմանագիրը, հավաստիացնում է, որ տեղյակ է պարզեցված վարույթի առանձնահատկությունների մասին, իսկ սույն գլխով նախատեսված համաձայնությունը բխում է իր շահերից:
8.4. Սույն կետը գործում է, եթե Կողմերի միջև ձեռք չի բերվել վեճերը արբիտրաժի միջոցով լուծելու համաձայնությունը:
8.5. Այն, ինչ նախատեսված չէ Պայմանագրով կամ սույն Կանոններով կարգավորում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:
8.6. Պայմանագրից բխող պահանջները կարող են ներկայացվել Ֆինանսական Համակարգի Հաշտարարին, որը Կողմերի միջև ծագած վեճը լուծում է «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով: Ընդ որում, եթե գույքային պահանջի չափը չի գերազանցում 250 000 (երկու հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթը, ապա ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումները չեն կարող վիճարկվել Բանկի կողմից (սույն կետը գործում է, Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի համաձայն, միկրոձեռնարկատիրության սուբյեկտ համարվող Վարկառուների դեպում):

9. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

9.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կնքման պահից և գործում է մինչև Պայմանագրով սահմանված կարգով պարտավորությունների ամբողջական կատարումը:
9.2. Սույն Կանոնները հանդիսանում են Պայմանագրի բաղկացուցիչ և անբաժանելի մասը:
9.3. Սույն Կանոնները հրապարակվում են Բանկի ինտերնետային կայքում և կարող են պարբերաբար Բանկի կողմից միակողմանիորեն փոփոխվել, փոփոխված Կանոնները ուժի մեջ են մտնում հրապարակման պահից, եթե Բանկի կողմից փոփոխություններն ուժի մեջ մտնելու առավել ուշ ժամկետներ չեն սահմանվում:
9.4. Պայմանագրում փոփոխություններ և (կամ) լրացումներ կարող են կատարվել Կողմերի փոխադարձ համաձայնությամբ, բացառությամբ Պայմանագրով և (կամ) Կանոններով նախատեսված դեպքերի:
9.5. Կողմերն ընդունում են, որ պահպանում են բիզնեսի էթիկայի ամենաբարձր չափանիշները իրենց գործունեության շրջանակներում: Կողմերը իրավահարաբերությունների ամբողջ ընթացքում միմյանցից ակնկալում են բարձր անհանդուրժողականություն կոռուպցիոն դրսևորումների նկատմամբ: Վարկառուն, կնքելով Պայմանագիր, հավաստում է, որ ծանոթացել է Բանկի հակակոռուպցիոն քաղաքականությանը, որը հասանելի է հետևյալ հղմամբ. https://idbank.am/information/helpfull-information/PO-1300-0200-02_ARM.pdf: Վարկառուն, կնքելով Պայմանագիր, սույնով հավաստում է, որ Բանկի հակակոռուպցիոն քաղաքականությունն իր համար ամբողջությամբ ընդունելի է: Կողմերը հավաստում են նաև, որ հավատարիմ կլինեն ՀՀ գործող հակակոռուպցիոն օրենսդրության ու Բանկի հակակոռուպցիոն քաղաքականությանը:
Կողմերը, նրանց փոխկապակցված անձինք, աշխատակիցները, ինչպես նաև միջնորդներն ու ներկայացուցիչները, որոնք ուղղակիորեն կամ անուղղակիորեն ներգրավված են Կողմերի պարտավորությունների կատարման մեջ չպետք է ընդունեն, վճարեն, առաջարկեն վճարել և թույլատրել (թույլատրել) վճարել/ընդունել որևէ տեսակի կանխիկ կամ ցանկացած օգուտների փոխանցում (ներառյալ ոչ նյութական), ուղղակիորեն կամ անուղղակիորեն, ցանկացած անձի՝

գործողությունների կամ որոշումների վրա ազդելու նպատակով, այդ թվում՝ շրջանցելով օրենքներով սահմանված ընթացակարգը կամ հետապնդելով այլ ապօրինի նպատակներ:

9.6. Պայմանագիրը պարունակում է Կողմերի միջև առկա բոլոր պայմանավորվածություններն ու համաձայնությունները և ամբողջությամբ համապատասխանում է նրանց կամահայտնությանը:

9.7. Պայմանագրի գործողության ընթացքում Հայաստանի Հանրապետության օրենսդրության և Հայաստանի Հանրապետության Կենտրոնական Բանկի նորմատիվային ակտերի փոփոխությունները, որոնք կտարածվեն Պայմանագրի պայմանների վրա, պարտադիր են Կողմերի համար:

9.8. Սույն Կանոնների և Պայմանագրի միջև հակասությունների դեպքում նախապատվությունը տրվում է Պայմանագրին, եթե Կողմերի փոխադարձ գրավոր համաձայնությամբ այլ բան չի որոշվել:

9.9. Սույն Կանոնների և Տեղեկատվական ամփոփագրի միջև հակասությունների դեպքում նախապատվությունը տրվում է Տեղեկատվական ամփոփագրին, եթե Կողմերի փոխադարձ գրավոր համաձայնությամբ այլ բան չի որոշվել: